

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/07-1**

ք. Երևան

«05» փետրվար. 2021թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալի հ. Պողոսյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 20.01.2021թ.-ի Հ-12-Լ հրամանի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ոչ ավել, քան 2400000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V_9 = V_9 / N_9 \times D_9$ , որտեղ՝

V<sub>9</sub>-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

N<sub>9</sub>-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

N<sub>9</sub>-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

D<sub>9</sub>-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ<sub>9</sub>-ն մատուցված ծառայության քանակն է:

Պայմանագրի N 1 հավելվածի գնացուցակում նշված են V<sub>9</sub>/N<sub>9</sub>×D<sub>9</sub> բանաձևով հաշվարկված գները:

#### 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ  
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011204089  
ՀՎՀՀ 00006505



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ  
ք. Երևան, Ռուբինյանց 31  
«Արարատբանկ» ԲԲԸ  
Հ/Հ 1510042745550100  
ՀՎՀՀ 00873228



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ձ դրամ»

Չափաբաժնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության				մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը	
1	50111130/501	Տոյոտա Քեմրի 2.4 (2008թ.) TOYOTA CAMRY ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	800000	1	Բ. Երևան, Կատարոթի տեխնիկական սպասարկման կայանում	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:	
4	50111130/504	ԿիԱ Սերատո 1.6 (2012-2014թ.) KIA CERATO ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	1000000	1			
7	50111130/507	Հյունդաի Տուկսոն 2.4 (2011թ.) HYUNDAI TUCSON IX35 2.4 ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	600000	1			

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ և նույնացման համարները՝ ըստ չափաբաժինների		
		1-ին չափաբաժին	4-րդ չափաբաժին	7-րդ չափաբաժին
		Տոյոտա Քեմրի 2.4 (2008թ.) TOYOTA CAMRY	ԿԻԱ Սերատո 1.6 (2012-2014թ.) KIA CERATO	Հյունդայի Տուկսոն 2.4 (2011թ.) HYUNDAI TUCSON IX35
		JTNBE40K703185855 JTNBE40K703155948	KNAFX411BE5835138 KNAFT411BC5974398 KNAFT411BE5851161 KNAFX411BE5866919	KMHJU81CDCU442715
1	2	3	4	5
		Մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գներ -գնացուցակ /ՀՀ դրամ/		
1	Բռնկման համակարգի ստուգում	1152.64	1176.65	988.718
2	Կցորդման համակարգի ստուգում	1152.64	1176.65	974.394
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1152.64	1176.65	974.394
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1152.64	1176.65	974.394
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	1152.64	1176.65	974.394
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1152.64	1176.65	974.394
	1. Շարժիչ			
7	Շարժիչի հանում և տեղադրում	38421.3	39221.5	32479.8
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	142159	176497	142911
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	30737	31377.2	25983.8
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	23052.8	23532.9	19487.9
11	Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով	6915.83	7059.87	5846.37
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	2305.28	2353.29	1948.79
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	2305.28	2353.29	1948.79
14	Փականների խցուկնի փոխարինում	2305.28	2353.29	1948.79
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	2305.28	2353.29	1948.79
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	73000.4	74520.9	61711.6
17	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	34579.1	35299.4	29231.8
19	Ծնկաձև լիսեռի առամնանիվի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
20	Ծնկաձև լիսեռի ուղղում	7684.25	7844.3	6495.96
21	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	11526.4	15688.6	12991.9
22	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	11526.4	15688.6	12991.9
23	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	19210.6	19610.8	16239.9
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	7684.25	7844.3	6495.96
25	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	11526.4	15688.6	9743.94
26	Փոկանիվի փոխարինում	7684.25	7844.3	6495.96

28	Շարժիչի շղթայի փոխարինում	69158.3	70598.7	58463.7
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	15368.5	15688.6	12991.9
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	11526.4	11766.5	9743.94
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
32	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	768.425	784.43	649.596
33	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	9221.1	9413.16	9743.94
34	Յուղի ծորակի փոխարինում	1536.85	1568.86	1299.19
35	Օդաքաշակ փողրակի փոխարինում	3073.7	3137.72	2598.38
37	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	3842.13	3922.15	3247.98
38	Շարժիչի կափույրի փոխարինում	18442.2	19610.8	18188.7
39	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	18442.2	19610.8	18188.7
40	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	10758	10982	10718.3
42	Ատամնանիվի փոխարինում	768.425	784.43	649.596
43	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	768.425	784.43	649.596
44	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	16905.4	17257.5	16239.9
45	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	11526.4	11766.5	11043.1
46	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	9221.1	10982	9743.94
47	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	12294.8	12550.9	12991.9
48	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	12294.8	12550.9	11043.1
49	Գլխիկի հեղույսի փոխարինում	2689.49	2745.51	2273.59
50	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1152.64	1176.65	974.394
51	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	19210.6	19610.8	17539.1
52	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	15368.5	15688.6	14291.1
53	Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը	3073.7	3137.72	2598.38
54	Կափույրի բնիկի նորոգում /գնեզդո/	1536.85	1568.86	1299.19
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
55	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1152.64	1176.65	974.394
56	Ավտոմեքենայի հանգույցների յուղում			3247.98
57	Համակարգչային ախտորոշում	3842.13	3922.15	3247.98
58	Յուղի ռադիատորի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
59	Յուղի ռադիատորի նորոգում	768.425	784.43	649.596
60	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
61	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
62	Վառոցքի մոմի փոխարինում 1 հատ	384.213	392.215	324.798
63	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
64	Օդի գտիչի փոխարինում	768.425	784.43	649.596
65	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1536.85	1568.86	1299.19
66	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	768.425	784.43	649.596
67	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	6915.83	7844.3	7795.15
68	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	10758	10982	10393.5
69	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	16905.4	17257.5	15590.3
70	Բոցամուղի կողավորում	768.425	784.43	649.596
71	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	768.425	784.43	649.596
72	Բենզամղիչի փոխարինում	9221.1	9413.16	7795.15
74	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1536.85	1568.86	1299.19
76	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	6147.4	6275.44	5196.77

77	Ղեկավարման բյուրի վերանորոգում	15368.5	15688.6	12991.9
78	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15368.5	15688.6	12991.9
79	Վառելիքի բաքի մաքրում	2305.28	2353.29	1948.79
80	Օդի ծախսի տվիչի փոխարինում	13063.2	13335.3	11692.7
81	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	11526.4	11766.5	9743.94
82	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	7684.25	7844.3	7795.15
83	Բենզոլբաքի բենզոմոդիչի ցանցի փոխարինում	3842.13	3922.15	3247.98
84	Բենզոլբաքի բենզոմոդիչի ցանցի մաքրում	3842.13	3922.15	3247.98
85	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	9221.1	9413.16	7795.15
86	Տվիչի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
87	Ակսիատորի փոխարինում կամ նորոգում	3842.13	3922.15	3247.98
88	Օդազտիչի իրանի փոխարինում	1536.85	1568.86	1299.19
89	Էլ.բենզոմոդիչի կախոցի փոխարինում	768.425	784.43	649.596
3. Սառեցման և արտածման համակարգ				
90	Հովհարի փոխարինում	16905.4	17257.5	15590.3
91	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9221.1	9413.16	9094.35
92	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	15368.5	15688.6	14291.1
93	Ռադիատորի նորոգում	30737	31377.2	27932.6
96	Ընդարձակող բաքի փոխարինում	1536.85	1568.86	1299.19
97	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1536.85	1568.86	1299.19
98	Ջրի ծորակի փոխարինում	3073.7	3137.72	2598.38
99	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1536.85	1568.86	1299.19
100	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3842.13	3922.15	3247.98
101	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	53789.8	54910.1	45471.7
102	Վառարանի ռադիատորի նորոգում	768.425	784.43	649.596
103	Վառարանի շարժիչի փոխարինում	11526.4	11766.5	9743.94
104	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
105	Ջեռուցիչի իրանի փոխարինում	3842.13	3922.15	3247.98
106	Թերմոստատի փոխարինում	9221.1	9413.16	7795.15
107	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	12294.8	12550.9	11692.7
108	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	12294.8	12550.9	11692.7
109	Գեներատորի փոկի փոխարինում	3073.7	3137.72	2598.38
110	Գեներատորի փոկի ձգող հյուլակի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	30737	31377.2	27932.6
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	7684.25	10982	9094.35
114	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
115	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1152.64	1176.65	974.394
116	Խլարարի ներդիրի փոխարինում	3073.7	3137.72	2598.38
117	Խլարարի կախոցի փոխարինում	3842.13	3922.15	3247.98
118	Հովացման հեղուկի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
119	Դիֆուզորի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
120	Կոնդիցիոների լիցքավորում	7684.25	7844.3	6495.96
122	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	12294.8	12550.9	11692.7
123	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4610.55	4706.58	3897.58
124	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	4610.55	4706.58	3897.58
125	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	15368.5	15688.6	13641.5
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում	6147.4	6275.44	6495.96

4. Փոխանցման տուփ				
127	Փոխանցման տուփի յուղի գտիչի փոխարինում	10758	10982	9094.35
128	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	13831.7	14119.7	12991.9
5. Բաշխիչ տուփ				
129	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները			227359
130	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում			45471.7
131	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում			97439.4
132	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում			32479.8
133	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում			32479.8
134	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում			22735.9
135	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում			22735.9
136	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում			20787.1
137	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում			14291.1
138	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում			12991.9
139	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում			12991.9
140	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում			16239.9
141	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում			16239.9
142	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում			19487.9
143	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում			32479.8
144	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում			16239.9
145	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում			14291.1
146	Տվիչի փոխարինում			3247.98
147	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում			16239.9
148	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում			16239.9
149	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում			32479.8
6. Առջևի և հետևի կամրջակներ				
150	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում			35727.8
151	Հետևի կամրջակի կիսասոնու հանում և տեղադրում կամ փոխարինում			16239.9
152	Հետևի կամրջակի կիսասոնու առանցքակալի փոխարինում			6495.96
153	Հետևի կամրջակի կիսասոնու առանցքակալի խտաբուկների փոխարինում			5196.77
154	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում			6495.96
155	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում			35727.8
156	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում			12991.9
157	Կամրջակի տվիչի փոխարինում			649.596
158	Առջևի կիսասոնիները միացնող հանգույցի փոխարինում	15368.5	15688.6	12991.9
7. Կախոց				
159	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	9989.53	10197.6	9743.94
160	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	11526.4	11766.5	11692.7
161	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	13831.7	14119.7	12991.9

162	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	13831.7	14119.7	12991.9
163	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	13831.7	14119.7	11692.7
164	Անվակունդի գամասեղի և հեղուսի փոխարինում (մեկ անիվի համար)	5763.19	5883.23	4871.97
165	Ձախ կամ աջ հողակալի խտաբուկերի փոխարինում	3457.91	3529.94	2923.18
166	Ձախ կամ աջ հողակալի նորոգում	11526.4	11766.5	9743.94
167	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոցի փոխարինում	9221.1	9413.16	7795.15
168	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	11526.4	11766.5	9743.94
169	Առջևի զսպանակի փոխարինում	10758	10982	9094.35
170	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10758	10982	9094.35
171	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	3842.13	3922.15	3247.98
172	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	6147.4	6275.44	5196.77
173	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	6147.4	6275.44	5196.77
174	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	11526.4	11766.5	9743.94
175	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	4994.76	5098.8	4222.37
176	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	3457.91	3529.94	2923.18
177	Հարվածիչի (բարձիկի) փոխարինում	11526.4	11766.5	9743.94
178	Գնդե հողակալերի պատյանի փոխարինում	6147.4	6275.44	7795.15
179	Գնդե հողակալերի փոխարինում	6147.4	6275.44	7795.15
180	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7684.25	7844.3	6495.96
181	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4610.55	4706.58	3897.58
182	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	6147.4	6275.44	5196.77
183	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	3457.91	784.43	2923.18
184	Կայունարարի կալունակի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
185	Հետևի զսպանակների փոխարինում	10758	10982	9094.35
186	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	7684.25	7844.3	6495.96
187	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3073.7	3137.72	2598.38
188	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	11526.4	11766.5	9743.94
189	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	3457.91	3529.94	2923.18
190	Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում	6531.61	6667.66	5521.57
191	Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում	6531.61	6667.66	5521.57
8. Ղեկային մեխանիզմ				
192	Ղեկայունակի հիմնական նորոգում,	57631.9	58832.3	48719.7
193	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	7684.25	7844.3	6495.96
194	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	3842.13	3922.15	3247.98
195	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում կամ փոխարինում	9221.1	9413.16	7795.15
196	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	6147.4	6275.44	5196.77
197	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	15368.5	15688.6	12991.9
198	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5763.19	5883.23	4871.97
199	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	10758	10982	9094.35
200	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	10758	10982	9094.35

201	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	6147.4	6275.44	5196.77
202	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	3842.13	3922.15	3247.98
203	Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	7684.25	7844.3	6495.96
204	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	2305.28	2353.29	1948.79
205	Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում	3457.91	3529.94	2923.18
206	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	6531.61	6667.66	5521.57
207	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	4994.76	5098.8	4222.37
208	Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	3073.7	3137.72	2598.38
9. Արգելակային համակարգ				
209	Վակումային ուժեղարարի փոխարինում	24589.6	25101.8	22735.9
210	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	4610.55	4706.58	3897.58
211	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10758	10982	9743.94
212	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	9989.53	10197.6	8444.75
213	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	9221.1	9413.16	7795.15
214	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	6147.4	6275.44	5196.77
215	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9221.1	9413.16	9094.35
216	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	9221.1	9413.16	9094.35
217	Առջևի սուպպորտի վերանորոգում	9221.1	9413.16	7795.15
218	Հետևի սուպպորտի վերանորոգում	9221.1	9413.16	7795.15
219	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	9989.53	10197.6	9094.35
220	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	9989.53	10197.6	9094.35
221	Արգելակային փողոակի փոխարինում	7684.25	7844.3	6495.96
222	Արգելակային կոճղակների փոխարինում	4610.55	4706.58	4547.17
223	Արգելակային համակարգի օդահանում	4610.55	4706.58	3897.58
224	Թմբուկային կոճղակների փոխարինում	4610.55	4706.58	4547.17
225	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	7684.25	7844.3	7795.15
